



ՀՈԳԵՒՈՐ ՊՐԻՍՄԱԿ SPIRITUAL SPECTRUM

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
A PUBLICATION OF THE WESTERN PRELACY OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Editors: Bishop Torkom Donoyan and Rev. Fr. Movses Shannakian

6252 Honolulu Ave., La Crescenta, CA 91214. Tel:(818) 248-7737/8 Fax: (818) 248-7745

E-mail: INFO@WESTERNPRELACY.ORG, WWW.WESTERNPRELACY.ORG

ԻԲ. ՏԱՐԻ, ԱՊՐԻԼ - ՕԳՈՍՏՈՍ, ԹԻՒ 2



22nd Year, APRIL - AUGUST No. 2





ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ 2018-2019 ՏԱՐԻՈՒՆ ՎԵՐԱՄՈՒՄԻՆ ԿՈՒԹՈՎ

ՍՈՍԵՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍԵԸ

Սիրելի դաստիարակներ եւ աշակերտներ,

Ուսումնական 2018-2019 տարեշրջանի վերամուտի սա պահուն, քրիստոնեական ջերմ սիրով կ'ողջունեմ բոլորդ՝ տնօրենութիւն, դաստիարակներ, աշակերտներ, ծնողներ եւ մեր ուսումնական համակարգի ներկայացուցիչներ, այն յոյսով եւ վստահութեամբ, որ նոր տարեշրջանը Աստուծոյ օրհնութեամբ կը թեւակոխենք կենսուրախ տրամադրութեամբ եւ նոր յաջողութիւններու հասնելու ձգտումով:

Եկե՛ք, ամէն բանէ առաջ, պահ մը մեր գլուխները խոնարհեցնենք ու փառք տանք Աստուծոյ, որ մեզի պարգեւեց խաղաղօրէն բոլորելու ամառնային արձակուրդը եւ վերադառնալու դպրոց, մեր հոգիները, սիրտերն ու միտքերը բանալու այն լոյսին, որ կը տարածուի Հայ Դպրոցի փարոսէն, որպէսզի իբրեւ հայ քրիստոնեայ աշակերտներ՝ նոր գիտելիքներով հարստանանք եւ վերանորոգենք մեր եկեղեցական ու ազգային արժանիքներուն հաւատարմութեան ուխտը:

Ուսումնական այս նոր տարին, սիրելի աշակերտներ, ձեզմէ շատերուն համար բոլորովին նոր սկիզբ մը չէ ձեր ուսումնական կեանքին մէջ, իսկ նորեկները կը միանան ձեր ճամբուն: Դուք միասնաբար պիտի շարունակէք քալել այն ուղիէն, որ ձերն է եղած Հայ Դպրոցի սեմէն ներս մուտքի առաջին օրէն սկսեալ: Դուք նախ ծանօթացաք մերլեզուի տառերուն, յետոյ սկսաք կարդալ ու գրել հայերէն, սորվեցաք հայերէն երգեր, ձեր միտքը զարգացուցիք լեզուներով, գիտութեամբ եւ ուսումնական այլ ծրագիրներով: Տարուէ տարի, դուք աճեցաք միտքով ու մարմնով, վայելելով Ձեր տնօրէնին եւ դաստիարակներուն գուրգուրանքը. անոնք ձեզի համար եղան երկրորդ ծնողք: Մի՛ մոռնաք, որ Հայ Դպրոցը կրթական որեւէ հաստատութիւն չէ: Հայ Դպրոցին մէջ, տարբեր տեսակի գիտելիքներու կողքին, դուք մանաւանդ կը ստանաք հայեցի կրթութիւն, կը սորվիք մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքին ու մեր ժողովուրդին մասին, կը զգաք, որ մէկ մասնիկն էք հայութեան: Տակաւին, դուք կը սորվիք, թէ մեր ժողովուրդը դարերու ընթացքին ինչպիսի՞ գեղեցիկ պատմութիւն եւ մշակոյթ կերտած է. այդ բոլորը անսխալական հարստութիւն են, որուն ժառանգորդն ու տերը դո՛ւք էք: Իւրաքանչիւր տարի իրեն հետ կը բերէ նորութիւն մը: Այս տարի, 2018 թուականը Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100-րդ տարեդարձի տարին է: Դուք ալ ամիսներէ ի վեր մասնակից էք տօնախմբութեան: Գիտցէ՛ք սակայն, որ Հայաստանի Հանրապետութեան տարեդարձը միայն մէկ տարի չենք տօնախմբեր, այլ անիկա մեր կեանքին մաս կազմած է 100 տարիէ ի վեր, ու հոն պիտի մնայ նաեւ յառաջիկային, որովհետեւ անկէ մեզի հասած են պատգամներ, որոնց իրականացման մասնակից պիտի ըլլաք նաեւ դուք, որպէսզի մեր հայրենիքը դառնայ ամբողջական, Հայ ժողովուրդը տերը դառնայ իր բոլոր իրաւունքներուն: Թող Աստուծոյ Ս. Աջը ընդմիշտ հովանի ըլլայ Հայ Դպրոցին, Հայ Դաստիարակներուն ու աշակերտներուն, իրենց զաւակները Հայ ուսումնարանին վստահող ծնողներուն վրայ, օրհնէ նաեւ մեր հնամակալ եւ Ուսումնական Մարմիններուն նուիրեալ ծառայողները, բարերարներն ու Հայ Դպրոցի բոլոր զօրակից միութիւնները, որոնց զօրակցութեամբ կը բարգաւաճին մեր ուսումնարանները:

Բարի եւ յաջող տարեշրջան: Աստուած օրհնէ բոլորդ:

Սիրոյ ջերմ ողջունիւ,

Աղօթարար՝

ՄՈՒՇԵՂ ԱՐԵ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Առաջնորդ



PRELATE'S BACK TO SCHOOL MESSAGE

Dear teachers and students,

At the start of the 2018-19 academic year, with Christian love, I greet the principals, teachers, staff, students, parents and representatives of the schools, with the hope and trust that with the blessings of God, that this new school year will bring a renewed spirit to all.

Therefore, let us bow our heads and give thanks to Almighty God for granting us a safe summer break and a new academic school year. As Armenian Christian students, we will enrich our spirits, hearts and minds through the Armenian school, we will renew our religious and national vows. At the commencement of this new academic school year, for some, it may not be a new beginning in your academic studies, because you will continue striding on the same path since the early days of your academic lives. But, there will be many who will enter into this new school year, as new students, who will join you, and will walk together on the same path.

You have familiarized yourselves with our alphabet, and then began to read and write in Armenian, learned our songs, other languages and enriched your knowledge in various fields of studies. Year after year, you have grown in your knowledge and have enjoyed the care of your principal and teachers, who became a second parent to you.

Let us keep in mind that the Armenian School is not an ordinary educational institution of learning where students develop their minds with knowledge, the Armenian School, above all, is a special place where you learn reverence for our faith and heritage. It is a haven where students learn about our rich and ancient history, culture and the priceless traditions passed to us by our forefathers throughout the centuries.

This year, 2018, marks the 100th anniversary of the first Republic of Armenia. As many of you were involved with various celebrations commemorating the anniversary, you must remember that this year should not be a one-time celebration; rather, we must continue the celebrations for years to come. We must all live, demand, renew and revitalize our faithfulness to upholding the legacy of our forefathers who built our nation.


May God bless our principals, educators, students and parents who entrust the religious and cultural instruction of their children to the Armenian School. May God also bless the devoted members of the Board of Regents and School Boards, sponsors and community organizations who lend their valuable moral and financial support to our Armenian Schools, ensuring their continued success.

May this academic year be a good and successful year to all. God bless you all.

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian
Prelate, Western United States

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԵՒ ՀԱՅ ՄԱՅՐԸ



Սուրբ կոյս Մարիամին մասին քանի մը առիթներով խօսուած Է Աստուածաշունչին մէջ, այստեղ պիտի անդրադառնամ Կանայի հարսանիքին ընթացքին անոր ցուցաբերած վերաբերմունքին ու կեցուածքին, միաժամանակ ցոյց տալով թէ Հայ մայրը ի՞նչ կրնայ սորվիլ Աստուածամայրէն:

1- Այն հարսնետունը ուր Մարիամ գտնուեցաւ, պակաս մը կար եւ Մարիամ զգաց այդ պակասը: Ուշագրաւ Է որ մէկը չըսաւ Մարիամին որ գինին պակսեցաւ, բայց Մարիամ գիտցաւ: Թող Հայ մայրը Մարիամէն սորվի անդրադառնալ գոյութիւն ունեցող պակասին ու կարիքին:

2- Հարց մը կար մէջտեղ. գինին պակսած էր եւ ատիկա լուրջ խնդիր էր: Մարիամ այս խնդիրը ներկայացուց Քրիստոսի: Թող Հայ մայրեր Մարիամէն սորվին իրենց տուներուն մէջ կամ այլուր ծագած դժուարութիւնները ներկայացնել Յիսուսի եւ ո՛չ թէ ուրիշներուն:

3- Հարցը կամ խնդիրը ուրիշին տան մէջ էր: Մարիամ սակայն չեզոք դիրք չբռնեց: Ան չըսաւ. «Ինծի ի՞նչ: Հարցը տունիս հետ կապ չունի»: Ան ուրիշով, իր դրացիով, իր բարեկամուհիներով ալ մտահոգ էր: Ան անոնց երջանկութիւնը կը ցանկար: Թող Հայ մայրը Մարիամէն սորվի մտածել ուրիշին մասին նաեւ. նեցուկ կանգնիլ կարիքի մէջ եղողին ալ:

4- «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք» (Յի 2.5): Մարիամ թելադրեց սպասաւորներուն կատարել Յիսուսի ըսածը: Ան սորվեցուց մեզի ընել իր Որդիին կամքը: Թող Մարիամի նման, Հայ մայրը ինք եւս սորվեցնէ իր զաւակներուն եւ բոլորին՝ կատարել Քրիստոսի կամքը:



5- Թեև Մարիամ դրական պատասխան չառաւ իր Որդիէն, եւ սակայն, սպասաւորներուն պատուիրեց կատարել այն ինչ որ Յիսուս պիտի հրամայէր: Մարիամ իր խնդրանքին պատասխան ստանալու վառ ակնկալութեամբ լեցուն էր: Երբ աղօթքի կը կանգնինք, այս պարագայիս երբ աղօթքի կը կենայ Յայ մայրը, թող Մարիամէն սորվի պատասխան ստանալու հաւատքով ու յոյսով սպառնազինուած ըլլալ, նոյնիսկ եթէ կը թուի որ Յիսուս լուռ է:

6- «Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»: Իր այս խօսքով, Մարիամ կարծեք սպասաւորներուն կ'ըսէր. «Ձեզի ըսուածը ըրէ՛ք առանց առարկութեան: Ձեզմէ պահանջուածը կատարեցէ՛ք առանց հարցադրումներ կատարելու: Մի՛ հարցնէք ինչո՞ւ կամ ի՞նչպէս, այլ պարզապէս հնազանդեցէք ըսուածին»:

Յայ մայրեր թող սորվեցնեն իրենց զաւակներուն կատարել Աստուծոյ կամքը առանց տրտունջի, առանց առարկութեան, առանց կասկածի եւ առանց հարցականներ մէջտեղ դնելու:

7- Մարիամ սպասաւորներուն քայլերը ուղղեց իր Որդիին: Անոնց ուշադրութիւնը կեդրոնացուց իր Որդիին վրայ: Թող Յայ մայրեր Մարիամէն սորվին իրենց զաւակներուն քայլերը ուղղել Քրիստոսի: Ա՛յս պէտք է ըլլայ առաջնահերթ կոչումը Յայ մօր:



Քաղուած «Մանուկներուն Արքայութիւնը» գիրքէն
 Յեղինակ՝ Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան





ԼՈՒՐԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԵՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՐՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ



Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Ապրիլ 2018-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան չորս միաբան հայրեր՝ Գերպ. Ս. Մասիս Ծ. Վրդ. Չօպուեան (Առաջնորդ Քուէյթի եւ շրջակայից հայոց թեմին), Գերպ. Ս. Սիփան Ծ. Վրդ. Զէչեճեան (Առաջնորդ Սպահանի հայոց թեմին), Գերպ. Ս. Մետրոպ Ծ. Վրդ. Սարգիսեան (Կաթողիկոսական Փոխանորդ Արաբական Միացեալ Եմիրութեանց, Զաթարի եւ շրջակայից հայոց թեմին) եւ Գերպ. Ս. Թորգոմ Ծ. Վրդ. Տօնոյեան (Առաջնորդական փոխանորդ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան թեմին), արժանացան Եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ օծման՝ բարձր հայեցողութեամբ եւ հայրական տնօրինումով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգ. Վարչութեան անդամներ եւ ազգայիններ ներկայ եղան արարողութեան:

ՀԱՄԱՏԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՏԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ սկիզբ առաւ Եպիսկոպոսական ձեռնադրութեան ու օծման կոչման արարողութիւնը:

Հայրապետական թափօրը նուիրապետական բոլոր կարգերու եւ ժողովուրդի ներկայացուցիչներով ու հանդերձանքով առաջնորդուեցաւ Վեհարանէն դէպի Մայր Տաճար: Հայրապետին ամպիովանին կը կրէին ձեռնադրեալներու կնքահայրերը՝ Անուշաւան Նազարեան, Վարուժ Մովսէսեան, Հրայր Սողոմոնեան եւ Կարօ Էշկեան: Նորին Սրբութիւնը կը գլխաւորէր թափօրը առընթերակայ ունենալով Գերշ. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Գերշ. Ս. Նարեկ Արք. Ալեւմեզեան:

Իրենց Թեմերու Ազգային Ժողովներու խնդրագիրներուն եւ Վեհափառ Հայրապետին կողմէ տրուած արտօնութեան համաձայն ընծայեալ հայր սուրբերը ներկայացան Մայր Տաճարին Ս. Երրորդութեան խորանին առջեւ եւ խարտաւիլակ հայ սուրբին՝ Հոգշ. Ս. Պետրոս Վրդ. Մանուէլեանի ու վկաներու արտօնութեամբ ծնկաչոք կարդացին իրենց ուխտագիրները՝ հետեւելու անսայթաք կեանքի եւ ուղղափառ հայրերու վարքին ու գործունեութեան, ինչպէս նաեւ ծառայելու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ իրենց վստահուած հօտին: Անոնք ստորագրեցին իրենց ուխտագիրները ու խարտաւիլակին եւ վկաներու առաջնորդութեամբ ներկայացան Նորին Սրբութեան՝ ստանալու համար անոր օրհնութիւնը: Հայրա-



պետը եպիսկոպոսական իշխանութան խորհրդանիշ եմփփորոնները զգեցուց ընծայելուներուն եւ «Պահպանիչ»ով օրինեց զանոնք:

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ

Կիրակի, 15 Ապրիլ 2018-ին, Վեհափառ Հայրապետը Ս. Պատարագ մատուցեց եւ կատարեց եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու օծումը:

Հանդիսաւոր արարողութիւնը սկիզբ առաւ Հայրապետական թափօրով: Վեհափառ Հայրապետը ամպիովանիին ներքոյ Ս. Սեղանին սպասարկող ամբողջ շքախումբով, մուտք գործեց Մայր տաճար: Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը՝ խմբավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Աբղ. Նաճարեանի:

Պատարագի ընթացքին ընծայեալները ծնկաչոք հրաժարեցան աշխարհէն եւ կոչուեցան եպիսկոպոսութեան կարգին: Ապա, սրբալոյս Միւռնոսի հեղումով եւ «Առաքելոյ Աղաւնոյ» շարականի երգեցողութեամբ, Նորին Սրբութիւնը օծեց ընծայեալներուն ճակատները եւ աջ ձեռքին բթամատը եւ անոնց յանձնեց եպիսկոպոսական գաւազանն ու մատանին: Աւարտին Հայրապետը ընծայեալներուն կուրծքերը զարդարեց պանակեով:

Զեռնադրութեան եւ օծման արարողութեան աւարտին Նորին Սրբութիւնը տուաւ իր հայրապետական պատգամը: Առաջին հերթին Վեհափառ Հայրապետը իր ուրախութիւնը եւ գնահատանքը յայտնեց չորս ընծայեալներուն եպիսկոպոսական ծառայութեան միանալուն կապակցութեամբ: Ան յայտնեց, որ սա ուրախութիւն է հայ եկեղեցւոյ, հայ ժողովուրդին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին, որ Յեղասպանութեան արհաւիրքը ապրելէ ետք կարողացած է վերանորոգ ոգիով ու հաւատքով շարունակել իր առաքելութիւնն ու ծառայական կեանքը:

Վեհափառ Հայրապետը իր պատգամը ուղղելով նորած եպիսկոպոսներուն՝ կարեւորութեամբ շեշտեց երեք կետեր, որոնք հիմնականօրէն կ'ընդօժեն հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայելու հրամայականը: Հայրապետը նորած եպիսկոպոսներուն թելադրեց հայ եկեղեցին ունենալ իրենց կեանքի առանցքը եւ յիշեցուց, որ հայ եկեղեցին շէնք չէ, այլ Քրիստոսի մարմինն է, իսկ անոր դերակատարութիւնը սովորական դերակատարութիւն չէ եւ չէ

եղած մեր ժողովուրդի կեանքին մէջ: Նորին Սրբութիւնը շարունակեց ընդգծելով, որ եկեղեցին ծառայութիւն է եւ ոչ՝ իշխանութիւն, «հետեւաբար ծառայութիւնը պէտք է դառնայ ձեր կեանքի առաքելութեան ուղին», յայտնեց ան: Ապա Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ յիշեցուց նորընծայ եպիսկոպոսներուն, թէ մեր եկեղեցւոյ ու ազգին գերագոյն արժեքները պէտք է դառնան իրենց կեանքի մղիչ ոյժը ու նպատակը:

Վեհափառ Հայրապետը իր պատգամը աւարտեց աղօթք բարձրացնելով առ Աստուած եւ խնդրելով Անկէ, որ նորած եպիսկոպոսները վերանորոգ հաւատքով լծուին ժողովուրդին ծառայութեան ու նոր իրագործումներով արժեւորեն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռին ծառայական երթը:

Քարոզէն ետք, «Ողջոյն»ի պահուն, միաբան հայրերն ու բոլոր հոգեւորականները խորան բարձրանալով, շնորհաւորեցին նորած եպիսկոպոսները՝ համբուրելով անոնց միւռնուած ճակատները եւ ձեռքերը:





**ՔՐԵՏԵՆՔԱ ՀՈՎԻՏԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԸ ԿԵՐԱՆՈՒԱՆՈՒԵՑԱԲ
«ՄՅԵՐ ԵՒ ՍԱԹԻԿ ՏԵՐ ՅՈՎԿԱՆՆԵՍԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ»**



Կիրակի, 8 Ապրիլ 2018-ի յետմիջօրէին, ներկայութեամբ Առաջնորդ Սրբազանին, տեղի ունեցաւ Քրեւենթա Հովիտի Հայ Կեդրոնի անուանակոչութեան հանդիսաւոր արարողութիւնը. կառոյցը կոչուեցաւ «Տեր եւ Տիկին Միեր եւ Սաթիկ Տեր Յովհաննէսեան Երիտասարդական Կեդրոն», շնորհիւ ամուլին ազնիւ բարերարութեան: Ներկայ էին Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգէն Եագուպեան, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Տարօն Տեր Խաչատուրեան, քաղաքական ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Քրեւենթա Հովիտի «Չաւարեան» կոմիտէի ներկայացուցիչ Տիար Մայք Զելէշեան եւ անդամներ, Զալիֆորնիոյ Ծերակոյտի անդամ Էնթընի Փորթանթիսօ, Կլենտոնի քաղաքապետ Չարեհ Սինանեան եւ խորհուրդի անդամներ, Ազգ. Վարչութեան անդամներ եւ բարերար ամուլը՝ Տեր եւ Տիկին Միեր եւ Սաթիկ Տեր

Յովհաննէսեան ու իրենց զաւակները՝ Արի եւ Սարօ ու իրենց ընտանիքները:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Ս.ի սկաւաւտներու դրօշակի արարողութեամբ: Առաջնորդ Սրբազանը, կողքին ունենալով Արժ. Տ. Դեւոնդ Զինյ. Զիրագեանը, յատուկ աղօթքով կատարեց կեդրոնին օրհնութիւնը, որուն հետեւեցաւ բարերարին անունը կրող ցուցատախտակին քողագերծումն ու ժապաւենի հատումը: Սրահին մէջ, հանդիսավարը՝ Տիար Արիք Գեորգեան արտասասնեց ողջոյնի խօսք, իսկ Փորթանթիսօ յանձնեց գնահատանքի հռչակագիր մը:

Իր օրհնութեան խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը գոհունակութեամբ նշեց, թէ անլանակոչութեան այս արարողութիւնը կը զուգահիսի Նոր Կիրակի կամ Կրկնազատիկի օրուան, որ խորհրդանիշ է վերանորոգումի, հետեւաբար, կեդրոնին անուանակոչութեան



այս արարողությունն ալ արտայայտութիւն մըն է վերանորոգութեան ու վերակենսաւորման: Ան շնորհաւորեց «Ձաւարեան» կոմիտեութիւնը եւ անոր ճամբով՝ Դաշնակցութեան ամբողջ ընտանիքն ու համայնքը, ընդգծելով, որ «ընտանիքի մը մէկ անդամին իրագործումը բոլորին իրագործումը կը համարուի»: Ան մասնաւորապէս օրհնեց վաստակը բարերարներուն, որոնց ծառայութիւններն ու նուիրաբերումները կը բաշխուի մեր համայնքի բազմաթիւ կառոյցներուն, «անոնց անունին կը հանդիպինք մեր բազմաթիւ կառոյցներուն մէջ, իբրեւ ազնիւ բարերարներու»: Ան վեր առաւ նման կեդրոններու կենսական կարեւորութիւնը հայութեան հաւաքական կեանքին մէջ, եկեղեցիներուն ու դպրոցներուն կողքին, իբրեւ միջնաբերդերը մեր հաւատքին ու ազգային ժառանգութեանց. այս կեդրոնները նաեւ ապահով միջավայր են մեր ժողովուրդին ու մասնաւորաբար երիտասարդ սերունդին համար: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը յայտնեց, որ այս հանդիսաւոր արարողութիւնը կարելի է դիտել Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկներու ծիրին մէջ, իբրեւ խորհրդանիշ հայութեան վճռակամութեան ու վերածաղկումին, ու իր խօսքը եզրափակեց յորդորելով համայնքի գաւազները, որպէսզի գործակցութիւնը շարունակեն եղբայրական սիրով, բարի կամեցողութեամբ եւ վերանորոգ խանդավառութեամբ:

Սրտի խօսքեր արտասանեցին Տիար Մայր Զելէշեան՝ Հ.Յ.Դ. «Ձաւարեան» կոմիտէին անունով, Տիար Սարո Տէր Յովհաննէսեան՝ բարերար ընտանիքին անունով, եւ Տիար Տարօն Տէր Խաչատուրեան՝ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին անունով:

ԱՊՐԻԼ 24-Ը ՄԵՐ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

ԱՃԱԿԵՐՏԱԿԱՆ ԶԱԲԱԸ՝ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՆԱԶԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Հաւատարիմ մնալով վերջին տարիներուն հաստատուած ազնիւ ավանդութեան, եւ մեր սրբադասեալ նահատակներուն կտակին հանդէպ յանձնառութիւնն ու ուխտը վերանորոգելու կամքով, Ուրբաթ, 6 Ապրիլ 2018-ի կէսօրին, Լոս Անճելըսի շրջանի հայկական վարժարաններէ աւելի քան 1.200 աշակերտներ համախմբուեցան Մոնթեպելլոյի Նահատակաց

յուշարձանին շուրջ, հաղորդակից դառնալու նահատակներու պատգամին եւ գեղարուեստական յայտագիրով մը իրենց յարգանքը մատուցելու անոնց յիշատակին:

Հաւաքին մասնակցեցան հայկական 11 վարժարաններէ աշակերտներ, առաջնորդութեամբ իրենց տնօրէններուն ու դաստիարակներուն: Նշենք, որ Ազգ. Մեսրոպեան վարժարանէն խումբ մը աշակերտներ քայլարշաւով մը հասած էին յուշարձան: Ներկայ էին Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր տեսուչ Գերայ. Տ. Միւռնի Ծ. Վրդ. Ազնիկեան, հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետ. եկեղեցիներէ հոգեւորականներ: Բացման աղօթքը կատարեց Հայր Միւռնի, հոգեւորականները երգեցին «Հայր Մեր»ը, նահատակաց նուիրուած շարականը եւ արտասանեցին յատուկ աղօթքը, ապա նաեւ երգեցին «Տէ՛ր, Ողորմեա՛ս»:

Հաւաքի բացման խօսք արտասանեց Ազգ. Մեսրոպեան վարժարանի տնօրէն Տիար Դաւիթ Ղուկասեան, հակիրճ պատգամ մը ուղղեց Հայր Միւռնի: Հայր Սուրբն ու տնօրէնը ընդգծեցին, որ այս հաւաքը աշակերտական յարգանքի արտայայտութիւն մըն է մեր նահատակներուն հանդէպ ու յորդորեցին աշակերտները, որ հաւատարիմ մնան հաւատքի ու ազգային ինքնութեան համար իրենց գերագոյնը զոհաբերած մեր նահատակներու պատգամին, տէր կանգնին մեր իրաւունքներուն, պահպանեն հաւատքն ու մեր ազգային մշակոյթը, դառնան Հայ Դատի զինուորներ:

Խօսք առին ու երգերով հանդէս եկան աշակերտներ: Պաշտօնական յայտագրի ավարտին, բոլոր աշակերտները ծաղիկներ գետեղեցին յուշարձանին առջեւ: Այնուհետեւ, ծանօթ երգիչ Զրիստափոր Արապեան, ընկերակցութեամբ Կրէկ Յօշարեանի ու Նուագախումբին, ներկայացուց հայրենասիրական երգերու փունջ մը:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԳԱԲԱՌԻ ՎԵՐԱՀՅՍԿԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՈԳԵԿՈՉԵՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՐՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿ

Պահպանելով տարիներու իր ավանդութիւնը, Լոս Անճելըս գաւառի վերահսկիչներու խորհուրդը Երեքշաբթի, 10 Ապրիլ 2018-ի առաւօտուն, իր շաբաթական նիստին ընթացքին յատուկ արարողութեամբ մը ոգեկոչեց յիշատակը Հայոց Ցեղասպանութեան զոհ գացած մեր սրբադասեալ նահատակներուն: Յանուն



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, ներկայ եղաւ Գերպ. Ս. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան, ընկերակցութեամբ Արժ. Ս. Նարեկ Աւ. Զինյ. Փեղիվանեանի եւ Ս. Սովսէս Զինյ. Շաննագեանի: Հանդիպումին խորագիրն էր «1915էն 1923-ի Հայոց Ցեղասպանութեան յիշատակումի օր»: Ներկայ էին Հայաստանի հիւպատոսարանի ու հայկական յարանուանութեանց հոգեւոր ներկայացուցիչներ, Կլենտլիլ քաղաքապետ Չարեհ Սիւննեան եւ անդամներ ու Հայ Դատի յանձնախումբի անդամներ:

Հայր Միւռն ընթերցեց վերահսկիչ Զէթրին Պարկըրի ու պաշտօնակիցներուն ուղղուած Առաջնորդ Սրբազանին պատգամը, որուն մէջ Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն կը յայտնէր այս խորհուրդին սկզբունքային կեցուածքին ու հետեւողական զօրակցութեան, ինչպէս նաեւ՝ Ապրիլը Հայոց պատմութեան ամիս հռչակելուն համար: Ան կը նշէր, որ Հայոց Ցեղասպանութենէն ետք, աշխարհը ականատես եղած է ցեղասպանական բազմաթիւ արարքներու, որոնք կը շարունակուին նաեւ այսօր, շեշտելով, որ նման արարքներուն իրազեկութիւնը եւ ճանաչումը կարեւոր քայլ են նման վայրագութիւններու կրկնութիւնը կանխարգիլելու ճամբուն վրայ: «Այս է պատճառը որ, եւ անկախ անկէ, թէ որքան ժամանակ անցած է Ցեղասպանութենէն ի վեր, մենք պիտի շարունակենք մեր իրաւունքներուն ճանաչման եւ կենսագործման պայքարը, մեր կողքին ունենալով ձեզի պէս զօրակիցներ, նաեւ ճանաչում ապահովելու նման արարքներու զոհերուն նկատմամբ»: Ան իր խօսքը կ'եզրափակէր օրհնելով ժողովականները:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԶԱՂԱԶՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴԸ ՅԻՇԱՏԱԿԵՑ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ԱՄԵԱԿԸ

Նախաձեռնութեամբ Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեանի, Չորեքշաբթի, 18 Ապրիլ 2018-ի առաւօտուն, քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 103-ամեակի յիշատակման պաշտօնական հանդիպում մը, մասնակցութեամբ հայկական կազմակերպութեանց ու միութեանց ներկայացուցիչներու: Յանուն Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, հանդիպումին ներկայ եղաւ Արժ. Ս. Նարեկ Աւ.

Զինյ. Փեղիվանեան: Այս առիթով, քաղաքապետական խորհուրդը պատուեց կրթական կեանքի մէջ վաստակ կերտած հայորդիներ՝ Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանը, Տիար Գաբրիէլ Ինճէճիկեանը, Տիկին Վիվիըն Էքճեանը եւ USC համալսարանի յարկին տակ գործող «Շոահ» հիմնարկը:

ԱԶԳ. Ռ. ԹԻՖԼԵՆԶԵԱՆ ՄԱՆԿԱՄՍՈՒՐԻ
ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ԱԶԳ.
ԱՐԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐ
ՄԱՏՈՒՑԵՑԻՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ



Ապրիլ 24ի նախօրեակին, Ազգ. Ռիչըրտ Թիւֆէնքեան մանկամտորի աշակերտները Հինգշաբթի, 19 Ապրիլ 2018-ի առաւօտուն Ազգային Առաջնորդարան այցելեցին իրենց դաստիարակներուն հետ, ծաղիկներ դրին Ցեղասպանութեան Ս. նահատակներու յուշակոթողին դիմաց, ստացան օրհնութիւնը Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, որ նախորդ գիշեր վերադարձած էր Լիբանանէն: Մանուկները հայրենասիրական երգերով ուխտեցին կառչած մնալ Ս. նահատակաց կտակին:

Աշակերտները Ազգ. Առաջնորդարան ժամանեցին մանկամտորի վարիչուհի Տիկին Արսինէ Աղազարեանի եւ ուսուցչուհիներու ընկերակցութեամբ եւ համախմբուեցան Ցեղասպանութեան նահատակներու յուշակոթողին առջեւ: Առաջնորդ Սրբազանը իր կողքին ուներ Արժ. Ս. Նարեկ Աւ. Զինյ. Փեղիվանեանը:

Հաւաքը սկսաւ Տերունական Աղօթքի հաւաքական երգեցողութեամբ: Աշակերտներուն հետ մտերմիկ զրոյց մը ունենալով, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ կը գտնուինք Ապրիլ 24ի նախօրեակին եւ հաւաքուած ենք ոգեկոչելու համար մեր սրբադաստալ նահատակներու յիշատակը, որոնք յանուն ազգի, եկեղեցւոյ ու հայրենիքի նահատակուեցան: Ի պատասխան Ցեղասպանութեան մասին Ա-



ռաջնորդ Սրբազանին հարցումին, աշակերտները յայտնեցին, թե պահանջատր են մեր հողերուն, որոնք մեզմէ խլուած են ոճրագործ թուրքերուն կողմէ: Այնուհետեւ, աշակերտները միասնաբար երգեցին «Արդեօք ովքե՞ր են», «Սարտարապատ» եւ «Մեր Հայրենիք» քայլերգը եւ ծաղիկներ գետեղեցին յուշակոթողին առջեւ:

ԱԶԳ. Ռ. ԵՒ Ա. ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ 11-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՊՐԻԼԵԱՆ ՈՒԽՏԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԻՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵՋ



Հայաստան իրենց ուղեւորութեան Լախօթակին, Ազգ. Ռոգ Եւ Ալեք Փիլիպոս երկրորդական վարժարանի 11-րդ կարգի աշակերտները Հինգշաբթի, 19 Ապրիլ 2018-ի կեսօրին Ազգային Առաջնորդարան այցելեցին եւ վերանորոգեցին մեր հաւատքին ու ազգային արժէքներուն հաւատարմութեան ուխտը:

Ընկերակցութեամբ իրենց հայերէնի դաստիարակներուն, աշակերտները առաջնորդուեցան «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահ, ուր ընդունուեցան Առաջնորդ Սրբազանի կողմէ: Առաջնորդ Սրբազանին կողքին էր Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Փեիլիվանեան: Աշակերտները պատրաստած էին գեղարուեստական գեղեցիկ յայտագիր մը, որուն տիրապետող տարրն էր հայրենասիրութիւնը եւ եղաւ անոնց ուխտին մէկ արտայայտութիւնը:

Բացման խօսքը արտասանեց Արա Եագուպեան, շնորհակալութիւն յայտնեց հիւրընկալման համար, կանգ առաւ հայու կեանքին մէջ եկեղեցւոյ դերին ու ներգործութեան վրայ ու գոհունակութիւն յայտնեց, որ Մայիսին խմբովին Հայաստան պիտի այցելեն, Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակի օրերուն պիտի քալեն այն հողին վրայ, ուր ապրած են մեր նախնիները ու արձանագրած են պատմական իրագործումներ, հետեւաբար, խնդրեց Առաջնորդ Սրբազանին օրհնութիւնը այս ուխ-

տագնացութեան առիթով, խոստանալով հաւատարիմ մնալ մեր հոգեւոր ու ազգային արժէքներուն:

Հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Արենի Չորպաճեան, որ իւրաքանչիւր երգէ, արտասանութենէ ու նուագէ առաջ, ներկայացուելիք հատուածին մասին կատարեց դիպուկ նշումներ, արտայայտելով ընկերասիրութիւն, հայրենասիրութիւն եւ մշակութային արժէքներու հանդէպ սեր ու յարգանք: Յայտագիրը մարմնաւորուեցաւ երգերով, արտասանութիւններով ու նուագներով. աշակերտները բեմին վրայ վերապրեցուցին Էմինը, Մեծարեցը, Ծառուկեանը, Ամիրխանեանը, Խաչատուրեանն ու Պապաճանեանը, վկայելով, որ հայ արուեստագետներուն ոգին կ'ապրի իրենց մէջ:

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը գնահատանքով արտայայտուեցաւ աշակերտներուն ներկայացումին մասին, գոհունակութիւն յայտնեց, որ անոնք դարձեալ կը գտնուին Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ ու իրենց դաստիարակներուն հոգածու ինքնամքին շնորհիւ, աւելի գիտակից ու հասուն դարձած են, քան ինչ որ էին 3 տարի առաջ, առաջին այցելութեան օրերուն:

Ընդառաջելով աշակերտներու խնդրանքին, Առաջնորդ Սրբազանը մանրամասն բացատրութիւններ տուաւ Սրբալոյս Միւռնի պատմականին ու պատրաստութեան ձեւին մասին, նշելով, որ Հայց. Եկեղեցւոյ միւռնը իւրայատուկ է իր բաղադրութեամբ ու պատրաստութեան ձեւով, թէեւ այլ եկեղեցիներ եւս ունին միւռնի գործածութիւն: Ան շեշտեց, որ միւռնի գործածութիւնը ունի պատմական խորք, կու գայ իրեաներու Եգիպտոսէն ազատագրման օրերէն, Հայաստան հասած Էթիոպիոսի առաքեալներուն ձեռամբ ու վերահաստատուած՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչին կողմէ: Մեր եկեղեցւոյ հաստատումէն ի վեր, միւռնը ապրած է իր շարունակականութիւնը, որովհետեւ հին միւռնէն մաս մը կը խառնուի նորին, Ս. Էջմիածինի մէջ օրհնուած միւռնէն մաս մը կը խառնուի Անթիլիասի միւռնին եւ փոխադարձաբար, հետեւաբար, միւռնը նաեւ խորհրդանիշ մըն է մեր եկեղեցւոյ ու ազգի միութեան: Առաջնորդ Սրբազանը իր պատգամը եզրափակեց բարի ճանապարհ մաղթելով աշակերտներուն ու վստահութիւն յայտնեց, որ Հայաստանէն պիտի վերադառնան աւելի՛ հայացած, հաւատքի մէջ աւելի՛ զօրացած, իսկ այս վարժարանէն շրջանաւարտ



ըլլալէ ետք, կառչած պիտի մնան մեր ազգային կեանքին ու մասնակից պիտի ըլլան անոր:

Աւարտին, Առաջնորդ Սրբազանը պատասխանեց աշակերտներու հարցումներուն, նախ յաւելեալ լուսաբանութիւններ տալով միւռնին, ապա նաեւ այսօրուան աշխարհին մէջ հաւատքը պահելու եւ այլասերող ազդեցութիւններու դէմ դնելու հրամայականին մասին: Հանդիպումը վերջ գտաւ «Կիլիկիա»ի խմբերգումով եւ Առաջնորդ Սրբազանին «Պահպանիչ»ով:

ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՍԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՑԻՆ ՊԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՏԱԿ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Ս. ՆԱՅԱՏԱԿԱՑ ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ ԱՌՋԵՒ



Ազգային Վահան եւ Անոյշ Շամլեան Վարժարանի աշակերտները Ուրբաթ, 20 Ապրիլ 2018-ի առաւօտուն, Յեղասպանութեան 103-ամեակին առիթով խումբ-խումբ քայլարշաւով Ազգային Առաջնորդարան այցելեցին եւ Յեղասպանութեան սրբադասեալ նահատակներուն յուշակոթողին առջեւ վերանորոգեցին մեր պահանջատիրութեան ուխտը:

Աշակերտները վարժարանի շրջափակին մէջ կատարած էին ծառատնկում եւ մոմավառութիւն՝ նուիրուած Արեւմտեան Հայաստանի Շատախ շրջանին. ծառին հովանաւորն էր վարժարանի ծնողներէն՝ Արա եւ Ժագլին Թովմասեան ամուլը: Այնուհետեւ, աշակերտները խումբերու բաժնուած՝ քալելով հասան Ազգ. Առաջնորդարան: Անոնց կ'ընկերանային վարժարանի տնօրէնուհի Դոկտ. Թալին Զարկոտրեան, փոխ-տնօրէնուհի Տիկին Ռիթա Գաբրիէլեան, դաստիարակներ եւ ծնողներ:

Ազգ. Առաջնորդարանի մուտքին, անոնք դիմաւորուեցան Առաջնորդ Սրբազանի կողմէ, կողքին ունենալով Արժ. Տ. Նարեկ Ա. Քինյ. Փեղիվանեանն ու Տ. Սովսէս Քինյ. Շաննագեանը:

Աշակերտներն ու դաստիարակները զգեստաւորուած էին Արդարութեան Զայլարշաւի խորհրդապատկերը կրող շապիկներով:

Առաջին խումբին մաս կը կազմէին վարժարանի 6-էն 8րդ դասարաններու աշակերտները, երկրորդ խումբին՝ 3րդէն 5րդ դասարաններու աշակերտները եւ վերջապէս դեռատի մանուկները՝ առաջին եւ երկրորդ կարգի աշակերտները: Ազգ. Առաջնորդարանի շրջափակէն ներս մուտքին, բոլոր աշակերտները ծաղիկներ դրին նահատակաց յուշակոթողին առջեւ:

Առաջին եւ երկրորդ խումբի անունով խօսքեր արտասանեցին Վարժարանին հայկական ակումբի ներկայացուցիչները, իսկ երրորդ խումբին անունով՝ ուսուցչուհի Տիկին Արմենիկ Հայրապետեան. անոնք նշեցին, որ Ապրիլը մեր Ս. Նահատակները յիշելու ամիսն է ու հաւաստեցին, որ պահանջատէր պիտի մնան մեր դատին եւ իրաւունքներուն, հայ պիտի մնան եւ ընդմիշտ հայերէն պիտի խօսին:

Ինչպէս առաջին խումբին, նոյնպէս ալ յաջորդող երկու խումբերուն իր պատգամը ուղղեց Առաջնորդ Սրբազանը եւ նկատել տուաւ, որ կը գտնուինք Ապրիլ 24ի նախօրեակին եւ հաւաքուած ենք ոգեկոչելու համար մեր սրբադասեալ նահատակներու յիշատակն ու վերանորոգելու մեր հաւատարմութեան ուխտը: «Յեղասպանութեան սրբադասեալ նահատակները իրենց կեանքը զոհեցին յանուն ազգի, եկեղեցւոյ ու հայրենիքի», նշեց ան եւ յորդորեց հաւատարիմ մնալ Ս. Նահատակաց կտակին, ապրիլ հայօրէն, սիրել հայրենիքը, հայոց լեզուն ու մշակոյթը եւ ըլլալ պահանջատէր ու արդարատենչ:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգի խմբերգումով ու «Պահպանիչ»ով:

ԸԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՅԻՇԱՏԱԿԵՑ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ՐԴ ԱՄԵԱԿԸ

Ըալիֆորնիոյ խորհրդարանի կողքին գործող հայկական խմբակին նախաձեռնութեամբ, Երկուշաբթի, 23 Ապրիլ 2018-ին, նահանգային խորհրդարանը Սաքրամենթոյի մէջ գումարեց յատուկ նիստ մը, ոգեկոչելու համար յիշատակը Հայոց Յեղասպանութեան՝ պատմական ոճիրին 103-րդ ամեակին առիթով: Նիստին ներկայ եղան հայ հոգեւորականներ ու հայկական կազմակերպութեան ու միաւորներու ներկայացուցիչներ:

Յանուն Առաջնորդ Սրբազանին, Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեան ներկայ եղաւ Ծերակոյտի նիստին եւ Առաջնորդ Սրբազան Հօր բացման աղօթքը ընթերցեց:



Իր աղօթքին մէջ, Առաջնորդ Սրբազանը յարգանքի տուրք մատուցեց Հայոց Յեղասպանութեան, ինչպէս նաեւ անցեալի ու ժամանակակից ցեղասպանութեանց զոհերու յիշատակին, աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ հանգիստ շնորհէ անմեղ զոհերու հոգիներուն եւ պաշտպանութիւն պարգեւէ այսօրւան տագնապներուն հետեւանքով տառա-պանքի մատնուողներուն: Ան շնորհակալու-թեան խօսք ուղղեց խորհրդարանի անդամներուն, որ ամէն տարի, այս հանգրուանին, ժամանակ կը տրամադրեն յարգելու համար մեր Ս. Նահատակներուն յիշատակը եւ զօրակցութիւն յայտնելու հայ-ամերիկեան համայնքի զաւակներուն:

ԱՅԼ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 103-ՐԴ ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ

- Շաբաթ, 21 Ապրիլ 2018-ին, Փասատինայի «Ճիվէլէեան» երիտասարդական կեդրոնէն դէպի քաղաքի հանրային պարտեզին մէջ կանգնած Նահատակաց յուշարձանը տեղի ունեցաւ քայլարշաւ մը, ուր ներկայացուցաւ յատուկ յայտագիր մը: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Արժ. Տ. Պօղոս Քհնյ. Պալթայեան մասնակցեցաւ ձեռնարկի բացման աղօթքին: Խօսք առին Նահանգային ծերակոյտի անդամ Էլթընի Փորթանթինօ, քաղաքապետական խորհուրդի անդամներ եւ հայ համայնքի ներկայացուցիչներ: Տեղի ունեցաւ յուշարձան առաջնորդող ցուցատախտակի քողագերծումը. ցուցատախտակը պիտի գետեղուի թիւ 210 ազատուղիին ճամբեգրին: Շրջանի հայկական վարժարաններէն աշակերտներ ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը:

- Կիրակի, 22 Ապրիլին, Առաջնորդ Սրբազանը հանդիսապետեց Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ Ս. Պատարագին, բարեխօսական կարգ կատարեց, նուիրուած մեր Ս. Նահատակներուն, եւ փոխանցեց իր պատգամը:

- Նոյն օրը, ՀՕՍ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան շաբաթօրեայ վարժարաններու խնամակալ մարմինը կազմակերպեց աշակերտական ուխտագնացութիւն դէպի Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձան: Ներկայ էին Նայիրի, Արաքս, Սիփան եւ Սեւան մասնաճիւղերու աշակերտները, ընկերակցութեամբ իրենց վարչական ներկայացուցիչներուն, տնօրէնուհիներուն, ուսուցիչներուն եւ ծնողներուն: Անոնք ընդունուեցան Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեանի կողմէ ու «Տերունական» աղօթքի ու «Տեր Ողորմեա»ի երգեցողութեամբ բարձրացան դէպի յուշարձան եւ մեխակներ գետեղեցին յուշարձանին դիմաց: Արտասանուեցան սրտի խօսքեր եւ երգուեցան հայրենասիրական երգեր:

- Յետմիջօրէին, Մոնթեպելլոյի Նահատակաց յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ քաղաքական-ժողովրդային աւանդական հաւաքը. այս տարի մեր գաղութը կը նշէ Մոնթեպելլոյի յուշարձանին 50-րդ տարեդարձը: Հայկական երեք յարանուանութեանց հոգեւոր առաջնորդներուն եւ հոգեւորականներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ հաւաքի բացումը, սրբադասեալ Նահատակներուն նուիրուած բարեխօսական աղօթքով:

Խօսք առին ընտրեալ պաշտօնատարներ: Գլխաւոր բանախօսն էր Յեղասպանութեան օրերուն Օսմանեան կայսրութեան մօտ Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուի ծոռը՝ Պապ Մորկընթաու: Բոլոր արտայայտուողները ոգեկոչեցին Յեղասպանութեան Նահատակներուն յիշատակը եւ շեշտեցին, որ Միացեալ Նահանգներու դաշնակցային կառավարութիւնը պէտք է ճանչնայ Յեղասպանութիւնը ու անկէ բխող մեր իրաւունքները: Հայկական վարժարաններու աշակերտներ խումբ-խումբ հանդես եկան ազգային ու հայրենասիրական երգերով, խոր տպաւորութիւն գործելով ոգեկոչման մասնակցողներուն վրայ:

- Կիրակի երեկոյեան, Լաս Վեկասի Յեղասպանութեան յուշակոթողին առջեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն եւ հսկում, Նախաձեռնութեամբ Հայ-Ամերիկեան մշակութային ընկերակցութեան: Քաղաքի Ս. Կարապետ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Արսէն Քհնյ. Գասապեան մասնակցեցաւ հաւաքի բացման աղօթքին: Հայաստանի պատուոյ հիւպատոս Տիար Ատրուշան Արմէնեան քաղաքապետութենէն ստացաւ հռչակագիր մը, որ Ապրիլ 24-ը կը նկատէ քաղաքին մէջ Հայոց Յեղասպանութեան յիշատակումի օր:

- Երկուշաբթի, 23 Ապրիլի երեկոյեան, Նախաձեռնութեամբ շրջանի «Դրօ» կոմիտէութեան, Մոնթեպելլոյի յուշարձանին առջեւ տեղի ունեցաւ ոգեկոչական հանդիսութիւն մը: Գերպ. Տ. Միւռն Օ. Վրդ. Ազնիկեան եւ Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան ներկայ եղան արարողութեան:

- Երեքշաբթի, 24 Ապրիլի յետմիջօրէին,



տեղի ունեցավ դեպի թրքական հիւպատոսարան «Արդարութեան Զայլարչաւ»ը. բազմատասնեակ հազարաւոր ցուցարարները «ՓԷՆ Փասիֆիք Փարք»էն ուղղուեցան դեպի հիւպատոսարան, ուր գործադրուեցաւ յատուկ յայտագիր մը: Առաջնորդ Սրբազանը, հոգեւոր հայրեր եւ Ազգ. Վարչութեան անդամներ մասնակեցան քայլարշաւին:

- Երեքշաբթի, 24 Ապրիլի երեկոյեան, Կլենտլի «Ալեքս» սրահին մէջ տեղի ունեցաւ քաղաքապետութեան կազմակերպած անանդական հաւաքը: Գլխաւոր բանախօսներն էին Տին Բէյն եւ Մոնթէլ Ուիլիզմը՝ Յեղասպանութեան մասին «Architects of Denial» վաւերագրական ժապաւենին արտադրիչները: Գեղարւեստական յայտագիրին մասնակցութիւն քերին Ազգ. Ռոզ եւ Ալեք Փիլիպոս վարժարանի աշակերտներ, Լոս Անճելըսի «Պելֆրի» երգչախումբը, Դաւթեան-Մարիամեան կրթական հաստատութիւնը եւ Համազգայիի «Անի» պարախումբը: Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, ներկայ եղան Արժ. Տ. Վազգէն Ա. Զինյ. Աթմաճեան եւ Տ. Մովսէս Զինյ. Շաննագեան:

**ԱԶԳ. ԱՐԻ ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
ՎԱՐժԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ
ՎԵՐԱՆՈՐՈՂԵՑԻՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՈՒ
ՀԱՄԱՏԵԻ ՀԱՄԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՈՒՆՏԸ**



Օրէնճ Զառնթիի Ազգ. Արի Կիրակոս Մինասեան վարժարանի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ դասարաններու աշակերտները Հինգշաբթի, 26 Ապրիլ 2018-ի կեսօրին այցելեցին Ազգային Առաջնորդարան եւ հայերէն լեզուի, մեր մշակոյթին ու քրիստոնեական հաւատքին հաւատարմութեան ուխտը վերանորոգեցին խօսքով եւ գործքով:

Վարժարանի տնօրէնուհիին՝ Օր. Սաւան Շիրինեանի, ուսուցիչներու առաջնորդութեամբ եւ ծնողներու ընկերակցութեամբ, աշա-

կերտները Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ հիւրընկալուեցան Առաջնորդ Սրբազանի կողմէ, որուն կողքին էին Ս. Զառնասից Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գարեգին Զինյ. Պետուրեան եւ Նորթ Հոլիվուտի ծխական համայնքի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Փեիլիանեան: «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ, հոգեւոր հայրերն ու հիւրերը ունեցան աղօթքի պահ մը. միասնաբար երգեցին «Հայր Մեր»ը, ապա, հոգեւոր հայրերը երգեցին սրբադասեալ նահատակներուն ձօնաւած շարականը:

Աշակերտները առաջնորդուեցան Ազգ. Առաջնորդարանի շրջափակին մէջ կանգնած նահատակաց յուշակոթողը, ուր երգեցին «Կիլիկիա»ն ու ծաղկեփունջ մը ձօնեցին նահատակներուն: Ապա, անոնք համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, հիւրընկալներուն ներկայացուցին գեղարուեստական գեղեցիկ յայտագիրը մը. երեք աշակերտներ յաջորդաբար խօսք առնելով՝ յայտնեցին, թէ Ազգ. Առաջնորդարան եկած են իբրեւ այս տան ու Ս. Մեսրոպի հարազատ գաւակները, կը վերանորոգեն մեր լեզուին, մշակոյթին ու հաւատքին հաւատարմութեան ուխտը, եւ բարի մաղթանքներ կատարեցին Առաջնորդ Սրբազանին, շնորհակալութիւն յայտնելով հիւրընկալման համար: Ապա, բոլորը արտասանեցին Թեքեանի «Եկեղեցին Հայկական»ը, աշակերտ մը արտասանեց Վարուժանի «Ձօն»ը, իսկ երկու աշակերտ՝ Նալպանտեանի «Ազատութիւն»ը: Վերջին բաժինով, խումբը երգեց հայրենասիրական երկու երգ:

Առաջնորդ Սրբազանը իր պատգամը սկսաւ զնահատանք արձանագրելով ներկայացուցած կոկիկ յայտագիրին մասին, գոհունակութիւն յայտնեց, որ աշակերտները կը խոստանան հաւատարիմ մնալ մեր լեզուին, մշակոյթին ու հաւատքին, արտասանութեամբ ու երգով կը վկայեն, թէ գաւակներն եւ մեր եկեղեցւոյ ու մայր հայրենիքին: Ան յայտնեց, որ վերջին շաբթուան ընթացքին, ազգային երեք այլ վարժարաններու աշակերտներ եւս այցելած են Ազգ. Առաջնորդարան ու նոյն ուխտը վերանորոգած են, ու յորդորեց, որ աշակերտները խօսին հայերէն, յարգեն քիչ առաջ իրենց տուած խոստումը, որովհետեւ խոստումը յարգողը կը վայելէ յարգանք: Ան օրինեց աշակերտները, տնօրէնուհիին, ուսուցիչներն ու ծնողները, եւ աշակերտներուն թելադրեց երախտապարտ ըլլալ անոնց:



ԿԼԵՆՏԵՅԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԷ ՇՐՋԱՆԱԼԱՐՏ ՀԱՅ ԱՇԿԱԿԵՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻ ԶԵՆՆԱՐԿ

Հանրային Վարժարաններու Հայ Աշակերտներու Յանձնախումբը՝ CASPS, Հինգշաբթի, 26 Ապրիլ 2018-ի երեկոյեան կազմակերպած էր Կլենտէյլի հանրային վարժարաններէ շրջանաւարտ հայ աշակերտներու ի պատիւ իր տարեկան 22-րդ հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ քաղաքի Adult Recreation Center-ի սրահին մէջ: Առաջնորդ Սրբազանը, ընկերակցութեամբ Արժ. Տ. Կոմիտաս Ա. Զինյ. Թորոսեանի եւ Ազգ. Վարչութեան անդամներէն Դոկտ. Գալուստ Յակոբեանի, ներկայ եղաւ հանդիսութեան եւ փոխանցեց իր օրհնութիւններն ու շնորհաւորանքը: Ներկայ էին Կլենտէյլի հանրային վարժարաններու համակարգի պատասխանատուներ, տնօրէններ, ուսուցիչներ, խորհրդատուներ եւ աշակերտներուն ծնողները, Ազգային Վարժարաններու ԽՆամակալ Մարմինի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ մեր գաղութի միութեանց ներկայացուցիչները:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց CASPS-ի գործավար Տիկին Արսինէ Յովհաննէսեան, որ նշեց, թէ այսօր ուրախութեամբ եւ հպարտութեամբ լեցուած ենք, ի տես մեր երիտասարդներուն արձանագրած փայլուն արդիւնքներուն, յոյս յայտնելով, որ անոնք կը վերադառնան մեր համայնքին եւ ներդրում կ'ունենան մեր հաւաքական կեանքին մէջ:

Հանդիսավարը՝ Տիար Էտրիք Սարգիսեան արտասանեց ողջոյնի խօսք: Ան շնորհաւորեց շրջանաւարտները, գնահատեց անոնց ձգտումները եւ դրական մօտեցումը, մաղթելով, որ ինքնավստահութեամբ լեցուին մեր պատմութեան ու ազգային արժէքներուն գիտակցութեամբ:

Շրջանաւարտներուն ուղղուած իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը շնորհաւորեց աշակերտները՝ իրենց արձանագրած յաջողութեան համար, նաեւ՝ ծնողներն ու ուսուցիչները՝ անոնց հոգածու վերաբերմունքին համար: Ան աշակերտները յորդորեց տոգորելու զօրաւոր կամքով, միշտ ըլլալու յուսալից եւ ապաւինելու Աստուծոյ՝ կեանքի յառաջիկայ փուլերուն: Ան թելադրեց լաւագոյնս օգտագործել իրենց բնատուր ձիրքերն ու կարողութիւնները, ո՛չ միայն սեփական յաջողութեան ի խնդիր, այլ նաեւ զանոնք ի սպաս դնելու մեր եկեղեցւոյ ու ազգի հաւաքական կեանքին

յառաջդիմութեան: Առաջնորդ Սրբազանը յիշեցուց, որ իբրեւ զաւակները Հայ ազգի՝ իւրաքանչիւրը պարտականութիւն մը ունի մեր հայրենիքին նկատմամբ. «Այս տարի կը տօնենք Հայաստանի անկախ հանրապետութեան հաստատման 100-ամեակը, շարունակեց Առաջնորդ Սրբազանը. ուխտեցէք մասնակից ըլլալ մեր հաւատքին ու սրտամօտ արժէքներուն պահպանման եւ տարածման գործին. այդ արժէքներէն է ժողովրդավարութիւնը, որ, ինչպէս տեսաք, յաղթանակ արձանագրեց վերջին օրերուն, իսկ ժողովրդավարութիւնը՝ մեր հայրենիքի հիմնական արժէքներէն է»: Ան իր խօսքը եզրափակեց աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ առաջնորդէ աշակերտներուն քայլերը, երբ անոնք կը թեւակոխեն կեանքի նոր փուլեր:

Գլխաւոր բանախօսն էր Լոս Անճելըս գաւառի գերագոյն ատեանի դատաւոր Էյմի Աւշանեան: Ան առաջին հերթին շնորհաւորանքի խօսք ուղղեց շրջանաւարտներուն, վերառաւ ուսման կարեւորութիւնը անհատի մը կեանքին մէջ, եւ իր փորձառութենէն մեկնելով՝ շեշտեց, որ յաջողութեան ու իրագործումներու կարելի է հասնիլ ուսումով, հետեւողականութեամբ, սեփական կարողութիւններուն վստահելով ու տեսիլք ունենալով: Ան աշակերտները հրաւիրեց միտքին կողքին զարգացնելու հոգին ու սիրտը, հոգածու ըլլալու ուրիշներու նկատմամբ, մասնակից ըլլալու համայնքային կեանքին, նաեւ՝ հպարտ զգալու ամերիկեան ու հայկական պատկանելիութեամբ: Ան իր խօսքը եզրափակեց ընդգծելով. «Ինչ որ պիտի ընէք, ըրէ՛ք խոր սիրով, բարի տրամադրութեամբ եւ ինքնավստահութեամբ, բայց մանաւանդ հետամուտ եղէք ձեր երազներուն»:

Կլենտէյլի կրթական համակարգի վերահսկիչ Տիար Ուինֆրետ Ռապըրտըն արտասանեց սրտի խօսք մը: Ան շնորհակալութիւն յայտնեց CASPS-ին՝ տարիներու սերտ գործակցութեան համար, իսկ աշակերտներուն ուղղելով իր խօսքը՝ շեշտեց, որ լաւ անունը շա՛տ աւելի կարեւոր է, քան հարստութիւնը. երբ յաջողութեան հասնիք, ձեր անունը բարձր պահեցէք եւ ներդրում ունեցէք ձեր համայնքի կեանքին մէջ, աւելցուց ան:

Աշակերտները նուագով ներկայացուցին գեղարուեստական յայտագիր մը: Աւարտին, տեղի ունեցաւ գնահատագիրներու բաշխում: